Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Մ. Բունիաթյանի անվան Հ. 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Հայաստանի պատմություն» նպատակային ուսուցմամբ /5 դասաժամ՝ 10-րդ դասարանում, 5 դասաժամ՝ 11-րդ դասարանում/, «Համաշխարհային պատմություն» հիմնական ուսուցմամբ /2 դասաժամ՝ 8-րդ դասարանում, 2 դասաժամ՝ 9-րդ դասարանում, 1 դասաժամ՝ 11-րդ դասարանում/, «Հայաստանի պատմություն» /3 դասաժամ՝ 8-րդ դասարանում, 3 դասաժամ՝ 9-րդ դասարանում, 3 դասաժամ՝ 11-րդ դասարանում/, «Հասարակագիտություն» /1 դասաժամ՝ 8-րդ դասարանում, 1 դասաժամ՝ 9-րդ դասարանում, 2 դասաժամ՝ 11-րդ դասարանում/ առարկաների ուսուցչի թափուր տեղեր:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ

ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր
մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի
վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի նոյեմբերի 19-ից դեկտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2026թ. դեկտեմբերի 4-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Մ. Բունիաթյանի անվան Հ. 8 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գավառ քաղաք Հ. Աբրահամյան փողոց 4/6:
Տեղեկությունների համար զանգահարել 093788910 հեռախոսահամարով: